ՀՏԴ 904
Հնագիտություն

Վարդգես ՍԱՖԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոն
Մանուշ ՏԻՏԱՆՅԱՆ
ՇՏՀ, ճարտարապետ

ՍՈՍ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՍԱՐ» ՈՒԽՏԱՏԵՂԻՍ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են ԱՀ Մարտունու շրջանի Սոս գյուղում 2019 թ. հուլիս-օգոստոս ամիսներին կատարած հնագիտական հետազոտությունների առաջին արդյունքները: Հետազոտությունների ընթացքում գտնվել են սյուն-կոթողի մասեր, ինչպես նաև բացվել են մատուռ– եկեղեցու պատերը:

Բանալի բառեր՝ *Սոս, Սբ. Լուսավորիչ, Սբ.Գրիգորիս, եկեղեցի, խաչակալ, ճրագ :*

В. Сафарян, М.Титанян

ПЕРВЫЕ РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ХРИСТИАНСКОГО СВЯТИЛИЩА НА «ГОРЕ ПРОСВЕТИТЕЛЯ» В С. СОС

В статье представлены первые результаты археологических исследований христианского святилища в с. Сос, осуществленных в июле-августе 2019 г., в ходе которых были выявлены части раннехристианских стел, а также остатки стен христианской церкви.

Ключевые слова: *Сос, святилище, Св. Просветитель, Св.Григорис, маслянный светильник,*

V. Safaryan, M.Titanyan

THE FIRST RESULTS OF ARCHAEOLOGICAL EXCAVATIONS OF THE CHRISTIAN SANCTUARY ON THE "MOUNTAIN OF THE ILLUMINATOR" IN THE VILLAGE OF SOS

The article presents the first results of archaeological excavations of the Christian sanctuary in the village of Sos, carried out in July-August 2019, in which parts of the early Christian steles, as well as the remains of the walls of the Christian church were identified.

Keywords. *Sos, sanctuary, St.Illuminator, St. Grigoris, oil lamp*

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղը գտնվում է պատմականորեն ձևավորված վաղ քրիստոնեական հարուստ

ժառանգություն ունեցող տարածքում:[1] Գրավոր աղբյուրներում Սոս գյուղը հիշատակվում է 19-րդ դարի կեսերից, չնայած որ այս տարածքը բնակեցված է եղել առնվազն մ.թ.ա. 2-1 դարերում, ինչի մասին են վկայում նրա տարածքում հայտնաբերված կարասային թաղումները: Սոս գյուղը միջնադարյան կոթողներով հարուստ Արցախի բնակավայրերից մեկն է:

Առանձին հետաքրքրութուն են ներկայացնում գյուղի արևելյան կողմում բարձրացող «Լուսավորչի սար»-ի հնությունները:

Հուշարձանը գտնվում է «*Լուսավորչի սար»* կոչվող կոնաձև, անտառապատ բլրի գագաթին, որի արևմտյան ստորոտում է տեղադրված Սոս գյուղը: Սարի բարձրությունը ծովի մակերեսից - 993 մ է: Հուշարձանի տարածքը հավասար է մոտավորապես 1.1 հա:(նկ.1)

Դեռևս 19-րդ դարի կեսին Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը գրում էր. «*Լուսավորչի սար*, բարձրացած է գիւղիս գլխին վերև՝ արևելեան հանդէպ: Սարիս կատարին վերայ կան շատ թափուած քարեր, տնաբակեր և եկեղեցու աւերակ: Աւանդաբար պատմում են. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կողմերումս քարոզելու և եկեղեցիներ հիմնարկելու ժամանակ գիշերն բարձրացած է սարիս գլուխն և աղոթքով լուսացրած գիշերները: Սուրբ Գրիգորիս Աղուանից կաթուղիկոսի մարմինը երբ փախցրած բերում են նորա աշակերտներն Դարբանտից այստեղ, նահատակել տուող թագաւորի զորականներն, փախցնողների ետևից ընկած, գալիս են մինչև այստեղ: Սակայն աշակերտներն ապաւինելով յԱստուած և դիմելով Սուրբ Լուսաւորչի աղոթած տեղն, ազատ են մնում հալածողներից և ապա նահատակուած Սուրբ Գրիգորիսի մարմինը տանում թաղում Ամարասի վանքում և իրանք փախչում դէպի Հայաստան»:[2]

2012 թ. ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչության կողմից պատրաստվել է այս հուշարձանի պահպանական գոտու նախագիծը, համաձայն որի՝ այն անվանվել է «Վանական համալիր Սբ. Լուսավորիչ»: Ըստ այդ նախագծի՝ այստեղ են գտնվում – «եկեղեցի և հնարավոր է գավիթը, բազմաթիվ բնակելի տների, բազմասենյականոց շինությունների փլատակներ, որոնք շրջապատված են եղել պարսպապատով»:[3]

2019 թ. հուլիս ամսվա կեսերին հուշարձանի տարածքում, մասնավորապես, ուխտատեղում, **ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության** նախարարության թույլտվությամբ և գյուղի բնակիչ բարերար Յաշա Դաղասյանի հովանավորությամբ, «Լուսավորչի սար» հնավայրում մաքրման աշխատանքներ են ձեռնարկվել:

---

[1] *Վաղ քրիստոնեական ճարտարապետական ժառանգության հետքեր հայտնի են Ճարտար, Բերդաշեն, Մաճկալաշեն գյուղերի շրջակայքում, սբ. Եղիշե վանքում, և իհարկե, Ամարասում:*

[2] ***Մ. եպս. Բարխուտաեանց*** *Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 219-220:՝*

[3] *ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչություն*

Սրբավայրի մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են նյութեր, որոնք վկայում են սրբավայրի վաղ քրիստոնեական ծագման մասին:Դրանցից է մաքրվող տեղանքի կենտրոնում գտնվող քարե տոռաձև խարիսխը, որի վրա կատարվում էր մոմավառություն, ինչի հետևանքով քարե խարիսխը ճաքել է և բաժանվել երկու անհավասար մասերի (նկ. 2):

Սրբավայրը մաքրելուց հետո, բացվեց արևմուտքից արևելք ուղղությամբ շինություն, որի արևելյան կողմում հատակը բարձրացված է: Ծավալային նման լուծումն ու ուղղվածությունը վկայում են, որ գործ ունենք քրիստոնեական մատուռի կամ եկեղեցու հետ: Սրբարանը, կառուցված է առանց շաղախ, կոպտատաշ քարե շարվածքով, ունի անկանոն՝ 9.7 x 6.0մ հատակագիծ:[1](նկ. 3):

Սրբարանի հարավ-արևելյան անկյունից 1,45 մ արևելք բացվել է հյուսիս-հարավ կողմնորոշում ունեցող կոպտատաշ քարերով շարված պատի հատված: Այստեղ գտնվել է կղմինդրների երկու բեկոր՝ զարդարված շտամպով՝ արված խաչաձև նախշով (նկ.4):

Սրբարանի տարածքը լցված հողից, փոքր թափված քարերից, թփերից ու ծառերից և դրանց արմատներից մաքրելու ժամանակ բացվել են փոքր և մեծ անտաշ թափված քարերի կուտակումներ՝ խառնված կղմինդիրների և զարգացած միջնադարով թվագրվող կավանոթների բեկորներ, ինչպես հասարակ, այնպես էլ՝ ջնարակած (նկ.5): Գտնված կղմինդիրները վկայում են, որ սրբարանի մոտակայքում եղել է սրբատաշ քարերով ավելի մեծ կառույց[2], իսկ մեր կողմից բացված սրբարանը հավանաբար ունեցել է ավելի համեստ տեսք և հարթ, գերանակապ տանիք:

Մատուռ-սրբարանի ներսում գտնվել են մեծ քանակությամբ ճրագներ հիմնականում՝ բեկորային: Գտնված ճրագները մեծ մասամբ պատկանում են բաց ճրագների տիպին (նկ.6):[3] Ճրագների մեջ ձևաբանական տարբերություն համարյա չկա. բոլոր ճրագները ունեն հարթ հատակ: Հատակի տրամագիծը տատանվում է 5 -7 սմ, իսկ բերանի տրամագիծը՝ 5 - 9 սմ.:

Գտնվել են նաև կավից պատրաստած երեք մոմակալներ, որոնք կարծես կրկնօրինակում են ավելի ուշ շրջանում երևան եկած մետաղյա մոմակալները. դրանք ունեն խողովակաձև և ռելյեֆային իրան, կլորավուն նստուկ (նկ.7: Հետաքրքիր է նաև երկկոն շրջանաձև իրան ունեցող ու մի քանի մոմերի համար նախատեսված բնիկներով մոմակալը (նկ.8):

---

[1] Պարփակ տարածքի երեք անկյունները մոտ են 90 աստիճանին, իսկ հյուսիս-արևելյանը՝ մոտ է 60 աստիճանին:

[2] Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ սրբարանի արևմտյան կողմում գտնվող մուտքի եզրաքարերը իրականացվել են կրկնակի օգտագործման սրբատաշ անկյունաքարերով:

[3] Սկզբում պատրաստվել է սովորական թաս, ապա , քանի դեռ կավը թաց է եղել, շուրթի սեղմուղով ձևավորվել է քթիկը:

Ճրագների ու մոմակալների նման բազմությունը վկայում է ինչ-որ սովորույթի մասին: Համաձայն մի վարկածի՝ Հայաստանում տարածված է եղել եկեղեցուն ճրագ նվիրելու ծեսը: Այսպես՝ ՀՀ Առագածոտնի մարզի Միրաք գյուղի միանավ բազիլիկ եկեղեցու պեղումների ընթացքում գտնվել են երկու տասնյակից ավել ճրագներ: Հետազոտողների կարծիքով՝ «ճրագների նման քանակությունը բացատրվում է եկեղեցում մոմի փոխարեն ճրագ վառելու հին սովորությամբ: … եկեղեցում վառված ճրագը թողնում էին հատկապես նրանք, ում տներում ճրագ շատ կար, այսինքն՝ «իրենց ճրագն էին տալիս եկեղեցուն», ինչպես ներկայումս լուցկի են տանում սրբավայր և այնտեղ թողնում»:[1]

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում վաղքրիստոնեական քարե կոթողների մասերը (նկ.9): Հայտնի է, որ վաղ միջնադարում տարածված էր կոթողների կանգնեցնումը սրբավայրերում, նահատակների շիրիմի վրա: Դրանք բաղկացած էին գետնախարիսխից, պատվանդանից, սյունից, խոյակից, խաչակալից և պսակվում էին ազատ թևերով խաչով:[2] Վաղ միջնադարում, մասնավորապես 4 -7 –րդ դդ., խաչը «կանգնեցում էին՝ ի նշան նոր հավատի հաղթության»:[3]

Ինչպես նշում են հայ պատմիչները, դեռևս 4 - րդ դարում ավերած ու քանդած հեթանոսական մեհյանների տեղում կանգեցվում էին քարե խաչակիր կոթողներ՝ որպես քրիստոնեության հաղթանակի նշան:[4] Այսպես կոչված ձողաբարձ խաչերը հայտնի են 5 – 7-րդ դարերի քանդակներից:[5]

Սոսի սրբարանի տարածքից հայտնաբերվել են երկու կոթողի մանրամասներ: Առաջինից ունենք երեք կողմից հավասարաթև խաչանախշով քանդակազարդված խարիսխ, սյունակոթող, որի խաչակալ խոյակը քանդակազարդված է բուսական հորինվածքով: Նշված խարիսխը արդեն իսկ երևում էր մուտքի հյուսիսային կողմում, մինչ մաքրման աշխատանքներ սկսելը: Այս տիպի զարդով խոյակներ հայտնի են Արցախի Տիգրանակերտից, Ճարտարից, Բերդաշենից, Քասաղից (նկ.10): Մեր դեպքում գործ ունենք խաչասյուն կոթողի խարսխի հետ. բոլոր կողմերի շրջանի մեջ ներառված խաչերի ներքևի մասում քանդակված է կարճ ձող:

Կոթողի գտնված մասերի երկարությունը կազմում է մոտ 2 մ.: Եթե դրան գումարենք պատվանդանը(մոտ 45-50 սմ) ու թևավոր խաչը (45-50 սմ), ապա կունենանք 290 -300 սմ բարձրությամբ խաչակիր կոթող (նկ.11):

---

[1] ***Մարգսյան Ռ.*** *,Միրաք գյուղի եկեղեցու պեղումներից գտնված ճրագները… էջ 386:*

[2] ***Պետրոսյան Հ.*** *,Վաղքրիստոնեական հայկական կոթողների և իռլանդական բարձր խաչերի ընդհանրությունները նոր գյուտերի լույսի տակ / (Similarities between the Early Christian Armenian monuments and Irish high crosses in the light of new discoveries, in Armenian), էջ 254:*

[3] *Նույն տեղում, էջ 255:*

[4] ***Ագաթանգեղոս****, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, 397:*

[5] ***Պետրոսյան Հ.****, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան,2004, էջ 52:*

Հավանաբար, երկրորդ կոթողին է պատկանում մասամբ կոտրված երկրորդ խաչակալ խոյակը: Ուշագրավ է, որ խոյակի ներբանի հարթության վրա փորագրված է հավասարաթև խաչ և ՀՈՎԱՆԻԿ / հավանաբար՝ Հովհաննես/ անունը:

Հաջորդ ուշագրավ նյութերը խաչակալ քարի (կամ քարերի) երկու բեկորներն են պահպանվել է միայն ոտքի վերին հատվածը կամարի ստորին հատվածի հետ: Ոտքերի հաստույթները և կամարների շառավիղներն իրենց բնորոշ չափերով մոտ են, սակայն նույնը չեն, որը թույլ չի տալիս նրանց միանշանակ նույնացնել որպես նույն խաչակալի երկու բեկոր: (նկ.8):

Սրբավայրում պահպանվել են թևավոր խաչի աջ թևի հատվածը՝ երկու բեկորով և խաչի ոտքի երկու բեկորները: Խաչաթևի ստորին հատվածում պահպանվել է վաղ միջնադարին բնորոշ շրջանը պարփակող պարանաձև հյուսքի մի հատվածը: Խաչի ոտքի վրա պահպանվել է երկրաչափական զարդանախշ (նկ.9):

Սրբարանի բեմի հարավային անկյունում գտնվել է նաև մի խոյակ, 51x48x21.5սմ չափերով, որը պատկանել է մեծ կառույցի: Խոյակը, չնայած քանդակազարդ է երեք կողմից, սակայն քառակողմ է և որմնախոյակ չէ: Կրկնակի օգտագործման ժամանակ խոյակի վերին հատվածը վերամշակվել է, փոխել իր ուղղաձիգ չափերը և հարմարեցվել նոր նպատակով օգտագործման համար: Նրա երկու կողմերը զարդաքանդակված են պարանաձև հյուսքով պարուրված երկու շրջաններով, իսկ երրորդը՝ հակինթի տերևներով (նկ.10):

Սրբարանի տարածքում գտնվել են նաև այլ քանդակազարդ փոքր բեկորներ, որոնց պահպանված չափերը թույլ չեն տալիս որոշել կիրառման վայրը (նկ.11):

Հայտնաբերված բեկորների քանակը, հորինվածքները և բազմազանությունը, ինչպես նաև տեղանքի ռելիեֆը թույլ են տալիս մտածել, որ տեղում գոյություն է ունեցել վաղ քրիստոնեական մեծ սրբավայր ՝ համալիր և աղոթատեղի, որի պարզաբանման համար հարկ կլինի իրականացնել պեղման աշխատանքներ:

Նկ.1



Նկ.2





Նկ.3



Նկ.4

նկ.5

Նկ.6

նկ.7

նկ.8

նկ.9

նկ.10



Նկ.11



նկ.12



Նկ.13



նկ.14



15





16

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը: